ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿՈՒՄ

Բառակազմությունը, որը լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկն է, «Եղծ աղանդոց»-ում դրսևորվում է երկու հիմնական եղանակով՝ բառաբարդմամբ և ածանցմամբ: Բառաբարդման միջոցով կազմված բարդությունները լինում են՝ հարադրական (վերածական) և համադրական:

1.Հարադրական բադություններ. Երկում հարադրական բարդություններից ամենատարածվածը հարադրավոր բայերն են, որոնց երկրորդ բաղադրիչը (հարադրյալը) սովորաբար բայ է, իսկ առաջին բաղադրիչը (հարադիրը) լինում է այլ խոսքի մաս, ինչպես և որևէ կախյալ բայարմատ կամ բառաձև, ըստ որում այդ կարգի բարդություններում որպես առաջին բաղադրիչ երբեմն հանդես է գալիս բայը: Միաժամանակ նշենք, որ բայական հարադրություններում կիրառվող տարբեր բայերից առավել գործածականը առնել և լինել բայերն են, որոնք կազմում են վկայված հարադիր բայերի մեծագույն մասը: Զգալի թիվ են կազմում նաև ի նախդրով կազմված հարադրավոր բայերը: Այժմ բերենք հարադրավոր բայերի օրինակներ. ազատ առնել, ազդ առնել՝ լինել, ակն ունել, անուն դնել, առաջի դնել, առնել արժանի՝ յաշտ՝ պատասխանի, առնուլ ի պաշտօն, առնուլ օճան, արբանեկութիւն հարկանել, բաւանդակ ունել, դնել մեղ՝ դատ, երկիր պագանել, երկրպագութիւն առնուլ, զանց առնել, զահի հարկանել, զհետ երթալ, զմտաւ ածել, ի բաց թքանել՝ թողուլ՝ մերժել, ի բուռն անկանել, ի դէպ ելանել, ի խնդիր լինել, ի մէջ բերել՝ մտանել, ի միջոց բառնալ, ի մտի դնել՝ խորհել՝ ունել, ի չափ հասանել, ի պաշտօն առնուլ, ի վերայ ածել՝ խաղալ՝ հասանել՝ յարձակել, ի վեր գալ՝ հանել, ի քարշ անկանել, կենակից լինել, հալածական առնել, հակառակ կալ, հետամուտ լինել, հնազանդ լինել, ձեռն արկանել, միտ դնել, մօտ գալ՝ հասանել, յամօթ առնել, յանձին ունել, յաշտ առնել, ուրախ լինել, պաշտօն առնուլ՝ հարկանել՝ մատուցանել՝ տանել, պատասխանի առնել, պատսպարան լինել, սիրտ առնուլ, վնաս առնել՝ գործել, փաշաման կրել, փող հարկանել և այլն:

Պետք է նկատել, որ շատ հարադրավոր բայեր, ստանալով փոխաբերական իմաստավորում, հանդես են գալիս իբրև դարձվածքներ՝ դառնալով լեզվական ոճավորման միջոց: Այդ կարգի հարադրավոր բայերից են՝ գալ ի չափ հասակի,

գալ ի քնին, գետ ի վերոյ լինել, դառնալ յետս, ելանել ի խաչ, ընդ բերան ածել, ընդ մահուամբ անկանել, ընդ միտս հարկանել, ընդ ոտս անկանել, ի խաչ ելանել, ի խաչ հանել || հանել ի խաչ, ի խաւար դառնալ, ի հանգիստ մտանել, խեղդ ընդ անձն առնել՝ արկանել՝ լինել, հանել յաչաց՝ յերեսաց, յական քթթել, յաչաց վրիպել, յարևէ արկանել, յարևու ունել, յընչաց քերել, յընչից արկանել և այլն: «Եղծ աղանդոց»-ում հարադրավոր բայերից բացի սահմանափակ կիրառության ունեն զուգադրական բայերը, որոնք դրսևորվում են երկու բայական բաղադրիչներով և արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ: Վկայված զուգադրական բայերից են՝ երթայ ղօղէ (11), կապեալ արկեալ (73), եկն եկաց (80), երթեալ հեռացեալ (149), ընտրել առնուլ (176), երթալ առնուլ (180), երթալ փրկել (ն.տ.),երթ մատո (193):

Պետք է նկատել, որ անվանական հարադրություններից «Եղծ աղանդոց»-ում գործածական են միայն կրկնավորները, իսկ բաղհյուսական բարդություններ հազվադեպ են հանդիպում: Վկայված կրկնավոր բարդությունների բաղադրիչները տարբեր խոսքի մասեր են՝ գոյական, ածական, դերանուն, թվական, որոնք երբեմն բաղադրվում են որևէ նախդրով (առ, ընդ, ի) կամ և շաղկապով: Ստորև ներկայացնում ենք «Եղծ աղանդոց»-ում գործածված կրկնավորների ամբողջական ցանկը. ազգի ազգի, ամսոյ ամսոյ, այլ և այլ, այլ ընդ այլոյ, անդէն անդէն, աւուր աւուր, բերան ի բերան, գունդս առ գունդս, ետ ընդ ետ, երամ երամ, երբեք երբեք ||երբէք երբէք, ինչ ինչ, իրիք իրիք, կեղծս ի կեղծս, կերպարանս կերպարանս, ձեռն ի ձեռն, մանր մանր, մի մի, միոյ միոյ, տակաւ տակաւ:

2. Համադրական բարդություններ. «Եղծ աղանդոց»-ում համադրական բարդություններից հատկապես պետք է նշել իսկական բարդությունները, որոնք կիրառվում են հոդակապով (հիմնականում ա-ով) կամ առանց հոդակապի, որոնց մեջ, անկասկած, գերիշխում են հոդակապով կազմությունները: Իսկական բարդությունները առհասարակ բոլոր տիպի բարդությունների մեջ ամենամեծ թիվ են կազմում և քննվող երկում բնութագրվում են զանազան կաղապարներով, որոնցով ստեղծվել են հիմնականում գոյականներ և ածականներ: Այդ բարդությունների կաղապարները ներկայացնելիս մենք մի քանի կցական համադրություններ, որոնք, իբրև համադրական բարդությունների երկրորդ տեսակ, ընդհանրապես սահմանափակ գործածություն ունեն, կբերենք որոշ կաղապարների մեջ, քանի որ դրանք կիրառման սկզբունքով կարող են դասվել իսկական բարդությունների շարքը: «Եղծ աղանդոց»-ում վկայված բազմաթիվ իսկայական բարդություններ,

որոնցից շատերը հենց Եզնիկն է կազմել, հիմնականում հանդես են գալիս հետևյալ կաղապարներով.

1.գոյական + գոյական՝ ականամոմ, աղանդամիտ, աստեղատուն, բոցալեզու, իշացուլ, ծովեզր, մաղձադեղ, ոտնաձայն, լեռնաձև, կորեկահատ:

2.գոյական + բայարմատ (բայահիմք)՝ ախտալից, աստուածախոյզ, աշխարհակալ, բանաքաղ, դիւահար, խոտակեր, խրատտու, ծովածին, որդնապարար, ունկնդիր, պղնձագործ, սերմնընկալ, օրէնսդիր:

3.գոյական + ածական՝ անտառախիտ, գործակից, ընկերակից:

4.ածական + գոյական՝ բարենշան, թանձրամարմին, ժանդահոտ, մեծատուն, վատանուն, ուրախամիտ, քաջասիրտ:

5.ածական + բայարմատ (բայահիմք)՝ չարակամ, նորաստեղծ, չարագործ:

6.ածական + ածական՝ մեծամեծ, չարաչար:

7.դերանուն + գոյական՝ ամենարուեստ, այլազգ, այսչափ, այսօր:

8.դերանուն + բայարմատ (բայահիմք)՝ ամենագէտ, ամենակալ:

9.դերանուն + ածական՝ ամենաչար:

10.դերանուն + դերանուն՝ այլուր, այսինքն:

11.դերանուն + մակբայ՝ միւսանգամ:

12.թվական + թվական՝ հնգետասան:

13.մակբայ + բայարմատ (բայահիմք)՝ արագագնաց, մշտաբուղխ:

14.թվական + մակբայ՝ միանգամ:

Ածանցներ - Ածանցները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ նախածանցներ և վերջածանցներ, ավելանում են ածանցող հիմքին սկզբից կամ վերջից՝ կազմելով նոր բառեր:

Պարզ է, որ «Եղծ աղանդոցը» նախածանցների քանակական կազմով բոլորովին աչքի չի ընկնում, քանի որ դասական գրաբարը հարուստ չի եղել նախածանցներով, ի տարբերության վերջածանցների, որոնց թիվը բավական մեծ է: Կիրառված նախածանցներից գործունը ան- և չ- ժխտական ածանցներն են, իսկ մյուսները գործունության տեսակետից կենսունակ չեն եղել, որոնցով կազմվել են սահմանափակ թվով բառեր: Վկայված նախածանցներն են՝ ան /անարժան, անբժշկելի, անգէտ, անգործ, անդադար, անթիւ/, չ /չաջողութիւն, չաստուած, չգիտանք, չգոյ, չկենդանի/, առ /առաւել, առ-ընթեր, առ-հասարակ, առ-ձեռն, առողջ/, ընդ /ընդդէմ, ընդէ՞ր, ընդ-հանուր, ընդհատ, ընդ-վայր/, համ /համաբնեայ, համագունդ, համազգի/, նախ /նախաբարբառ/, տար /տարագիր, տարաժամ, տարակոյս, տարապարտ/, տ /տգէտ, տկար/, ց ցայդ, ցանկ, ցերեկ/:

«Եղծ աղանդոց»-ում մեծ թիվ են կազմում վեջածանցները, ըստ որում բառակազմական կաղապարներից ամենատարածվածը պարզ հիմք (անվանա-

կան կամ բայական) + մեկ վերջածանց կաղապարով կազմություններն են: Ստորև ներկայացնում ենք «Եղծ աղանդոց»-ում կիրառված վերջածանցների ամբողջական ցանկը՝ համապատասխան օրինակների վկայակոչությամբ:

աբար /բազմաբար/, ագին /հահագին, ծանրագին/, ագոյն /ազնուագոյն, արագագոյն, աւագագոյն/, ած /աւերած, գթած, երկեղած, կոտորած/, ակ /ծովակ, երևակ/, ական /անապատական, իգական, մարտիրոսական, յաւիտենական/, ակար /վնասակար, օգտակար/, ային /երկնային, ցամաքային/, այն /ամենայն, համայն/, այք /եպիկուրայք/, ան /արժան, ըմբան (ըմպան), իշխան, կայան, պատուիրան/, անակ /փոխանակ/, անի /ամարանի, պիտանի/, անոց /կռուանոց, մեղուանոց/, անք /առականք, լլկանք, փրկանք, թշնամանք/, ապան /պահապան/, ապատիկ /բիւրապատիկ, բազմապատիկ/, ապէս /նմանապէս/, առօտ /համառօտ/, աստան /անդաստան, հեռաստան/, ատակ /յիշատակ/, ար /մթար, պատահար/, արան /կտակարան/, արէն || երէն /յունարէն, ասորերէն, հայերէն/, արիմ /հաւատարիմ/, ացի || -եցի /բաբելացի, եգիպտացի, եթովպացի, փիւնիկեցի/, ացու /ապականացու, պիտանացու/, աւ /կամաւ, կարգաւ, կանխաւ/, աւոր /հահաւոր, աղանդաւոր, դատաւոր, երկրաւոր/, եալ /առաքեալ, հաւատացեալ, կարօտեալ, հեծեալ/, եամն /այծեամն/, եայ /ժամանակեայ, հիւղեայ, քրիստոնեայ/, եան /բազմաստուածեան, ժամանակեան, չնչեան/, եղ /ասուեղ/, եղէն /բոցեղէն, հոգեղէն, հրեղէն/, եմն երբեմն, ուրեմն/, ենի1 /մորենի, ծիթենի/, ենի 2 /հայրենի, մայրենի/, (ե)րորդ /երկրորդ, երրորդ, չորրորդ/, եցիկ /գեղեցիկ/, եւ /արդարեւ/, եւին /ամենեւին/, եք /երբեք, ուրեք/, եքեան || եքին /ամենեքեան || ամենեքին, բոլորեքեան, երեքեան, երկոքեան, չորեքին/, էն /անդէն, անդրէն, արդէն/, ի /գործի, աւելի, թերի, ծարաւի, մոլի, եղծանելի/, իկ /այժմիկ, կտիկ, սակաւիկ, հնդիկ/, ին /առաջին, արտաքին, բաժին, ինքնին/, իչ /արարիչ, բժշկիչ, բնակիչ, գործիչ/, իցս /երիցս, երկիցս/, իւ /ճշմարտիւ, վաղիւ/, իւղ /երկիւղ/, իւն /գոչիւն, սօսաւիւն, սարսափիւն/, իք /երախտիք, կարիք, կարծիք, չարիք/, նի /յայտնի/, ող || օղ /ծնող, սպանող, հնձող, նմանօղ, ստացօղ/, ոյ /մեծարոյ/, ով /մեղմով/, ովին /գլխովին/, ոտ /բորոտ/, ոտի /օտարոտի, մեռելոտի, սնոտի/, որդ /աւելորդ, միջնորդ, ուղղորդ, հակառակորդ/, ոց /ամրոց, հալոց, ծմերոց/, ու /այժմու/, ութիւն /ագահութիւն, ազատութիւն, բազմութիւն/, ուկ /կանեփուկ/, ումն /ազդումն, աճումն, գլորումն, լուացումն, ծախումն, շարժումն/, ուն /ասուն, խօսուն, հասուն, թռչուն/, ունդ /ծնունդ/, ուչ /վայելուչ/, ուստ /ներքուստ, գալուստ, վերուստ/, ուտ /աւազակուտ/, ուրդ /ժողովուրդ, յագուրդ/, չուտ /խաւարչուտ/, սուն /երեսուն, եւթանասուն/, ստ /զգաստ, զգեստ, հանգիստ/, ք /աղօթք, բարք, գնացք/, օն /գոծօն/, օրէն /համօրէն, մարդկօրէն/: